ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/253

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Ապրեկո» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15233-2021 գրությամբ «Ապրեկո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 13.09.202թ.-ի թիվ 01/1115-21 գրության հիման վրա, 22.09.2021թ.-ին «Ապրեկո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 22.09.2021թ.-ին:

22.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/253 համարի ծածկագիրը:

30.09.2021թ.-ին և 22.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2021թ.-ին:

2. <u>«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.09.202թ.-ի թիվ 01/1115-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ) կարիքների համար՝ «Համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի» ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, կազմակերպված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնման գործընթացի (այսուհետև՝ մրցույթ) շրջանակներում «ԱՊՐԵԿՈ» ՍՊԸ մասնակիցը ներկայացրել էր մասնակցության հայտ 24-րդ և 37-րդ չափաբաժինների համար: Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2021 թ-ի հունիսի 29-ին (ժամը 11:00-ին՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 հասցեում): Հայտերի բացման նիստում վերը նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) հաստատեց, որ մասնակցի հայտում ներկայացված Հավելված 1.1-ը (կից ֆայլ «File 1 Havelvac 1.1») չի

համապատասխանում հրավերի (կից ֆայլ «File 2 Mrcuyti hraver») պահանջներին՝ մասնավորապես հայտում բացակայում էր 24-րդ չափաբաժնի ապրանքի մակնիշը:

Քանի որ ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 43-րդ կետի 1-ին ենթակետին համաձայն հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման արձանագրությունը (կից ֆայլ «File 3 Ardzanagrutyun II») հրապարակել էր հայտերի բացման հաջորդող աշխատանքային օրը, մասնակցի համար շտկման համար ժամանակը տրամադրվեց մինչև 01.07.2021 թ.: «ԱՊՐԵԿՈ» ՍՊԸ մասնակիցը 01.07.2021 թ-ին փոխանցեց Հավելված 1.1-ի շտկված տարբերակը (կից ֆայլ «File 4 Havelvac 1.1 shtkvac»), այն ուղարկելով հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին (կից ֆայլ «File 5 elektronayin namak»):

01.07.2021 թ-ին բողոք քննող անձը վարույթ ընդունեց 34-րդ չափաբաժնի հետ կապված ԳԲՔԱ-ՆԳ-2021/47 ծածկագրով բողոքը և մրցույթը կասեցրեց մինչև 21.07.2021թ.:

Մինչ դա, 01.07.2021 թ-ին, հանձնաժողովը ուսումնասիրեց մրցույթի հայտերը (ներառյալ «ԱՊՐԵԿՈ» ՍՊԸ մասնակցի նոր Հավելված 1.1-ը) և արձանագրեց, որ «ԱՊՐԵԿՈ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված լրամշակված հայտում նշված սարքի մոդելը հասանելի հարթակներում գոյություն չունի: Հանձնաժողովը բանավոր դիմեց մասնակցին, որ վերջինս ներկայացնի որևէ հիմնավորում նման մակնիշով ապրանքի գոյություն ունենալու մասին (ֆիրմայի կողմից ներկայացված տեխնիկական անձնագիր, տեղեկատվություն պաշտոնական կայքում և այլն): Մասնակիցը նորից խոստացավ ներկայացնել այդպիսի հիմնավորում: 27.07.2021 թ-ին, մրցույթի կասեցման ավարտից հետո, հանձնաժողովը արձանագրեց, որ «ԱՊՐԵԿՈ» ՍՊԸ մասնակից ներկայացրել է շտկված Հավելված 1.1-ը և որոշեց «ԱՊՐԵԿՈ» ՍՊԸ մասնակցի հայտը համարել հետագա գնահատման համար ընդունելի, քանի որ Հավելված 1.1-ում նշված տեխնիկական բնութագրերը համապատասխանում էին հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին (կից ֆայլ «File 6 Ardzanagrutyun III»): 30.07.2021 թ-ին՝ հայտերի ամփոփման օրը, հանձնաժողովը մերժեց «ԱՊՐԵԿՈ» ՍՊԸ մասնակցի հայտը, քանի որ գտավ, որ վերջինիս կողմից հայտում ներկայացված տվյալները (արտադրող ֆիրմայի անուն և ապրանքի մակնիշ) չեն համապատասխանում իրականությանը (կից ֆայլ «File 7 Ardzanagrutyun V»):

Առաջարկում ենք դիտարկել, 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությանը համաձայն, «ԱՊՐԵԿՈ» ՍՊԸ

մասնակցի ներառումը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ նշված մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ապրեկո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ապրեկո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.09.2021թ.-ի գրությամբ դիմել է «Ապրեկո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15233-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նաև որևէ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/253 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի ձեռքբերման նպատակով 22.06.2021թ.-ին հայտարարվել է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ապրեկո» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 29.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ապրեկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ը լրացված է թերի, մասնավորապես բացակայում է ապրանքի մակնիշը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Ապրեկո» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի 27.07.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ապրեկո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է շտկված հայտը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը հետագա մասնակցության համար գնահատել բավարար:

vii. Հանձնաժողովի 30.07.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Ապրեկո» ՍՊԸ-ի կողմից 24-րդ չափաբաժնի համար առաջարկած մոդելի տեխնիկական բնութագրերը հիմնավոր չեն և չեն համապատասխանում գնման հրավերով սահմանված ապրանքի բնութագրերին, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15233-2021 գրությամբ «Ապրեկո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի ձեռքբերման նպատակով 22.06.2021թ.-ին հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 7.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 7.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից համակարգչային և տեսաձայնագրող տեխնիկայի ձեռքբերման նպատակով 22.06.2021թ.-ին հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 29.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ապրեկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ը լրացված է թերի, մասնավորապես բացակայում է ապրանքի մակնիշը, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Ապրեկո» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 27.07.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ապրեկո» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է շտկված հայտը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը հետագա մասնակցության համար գնահատել բավարար: Սակայն Հանձնաժողովի 30.07.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշում է կայացվել «Ապրեկո» ՍՊԸ-ի կողմից 24-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտը մերժել, քանի որ Մասնակցի կողմից առաջարկած մոդելի տեխնիկական բնութագրերը հիմնավոր չեն և չեն համապատասխանում գնման հրավերով սահմանված ապրանքի բնութագրերին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ապրեկո» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15233-2021 գրությամբ «Ապրեկո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/253 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ապրեկո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**